

Տ Ե Տ Ե Ս

ՀԱՆԴԻՇԱ ԱՄՄԵՍԱՑ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ

Հ Ն Թ Ե Բ Ց Ո՛Ղ Ք

ՏՆՏԵՍՆ յահճնարարեցէք Զեր բարեկամաց . (թերին աժան է և օգտակար ամեն ընտանեաց) . բաժանորդագին վեցտամսեայ ՀԻՆԳ դրուշ միայն .

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԴԱՍԵՐ

Դաս Գ.

ԱՐՏԱԴՐԵԼՆ Ի՞ՆՉ Է

Ուղղակի եւ անուղղակի արտադրութիւն

ՊԵՏՐՈՍ . — Ճամբան եկած տաենս ինքնիրենու կ'ըսէի . «Պետրէ» , նորէն կ'երթաս կոր գլուխաւութիւն տալու Տընտես Աղքօրը . . . Ներեցէք , ինչ գէշ վարժուեր է բերաննիս . Տնեսն աղային պիտի ըսէի . կը ներէք , էփէնտիս :

ՏՆՏԵՍ . — Ես աւելի գոհ կ'ըլլամ , երբ կոչես զիս Տնտես աղքար կոմ եղբայր Տնտես : Զես յիշեր վանայ լձին այն խորհրդաւոր թռչունն , որոյ յուզիչ պատմութիւնն ըրաւ

մեզ Գարեգին վարդապետ Արտանձտեանց (դեռ վարդապետ
էր յայնժամ)։ Հե՞ս յիշեր թորոս աղքատը։ Բայց հիմայ թո-
ղունք թռչունը, միթէ մարդիկ իրարու տալու համար աւե-
լի քաղցր անուն մ'ունի՞ն քան այդ եղբայր անունը։ Մարդ-
կացին աղջն երբ ամենազարդացեալ վիճակի մը հասնի, մար-
դիկ առհասարակ եղբայր պիտի կոչեն զիրար։ Այդ անունը
տուօղն ալ ընդունօղն ալ ուրախակցութեան արժանի են։ Եւ
ես ձեր կողմէն իբրեւ կաղանդի նուէր կ'ընդունիմ եղբայր
անունը։

Պ. — Ձեզի հետ տեսնուողը, Տնտես էֆէնտի՛ . . . սխա-
լեցայ, Տնտես աղքար, ձեզի հետ տեսնուողը միշտ շահու-
վրայ է, ձեզի հետ տեսնուողը երանելի է։ բարա չունեցած
տեղու՝ իս համոզեցիք որ հարստութիւն ունիմ, հարուստ եմ։
Հիմայ ալ՝ ձեռքերս պարագ քովերնիդ եկայ, նայիմ որ ինէ
նուէր ընդունած կ'ըլլաք կոր։ Բայց ամենէն աւելի ինձի
ուրախութիւն պատճառող բանը ո՞րն է՝ գիտէ՞ք. հրամանք-
նուդ հետ սանկ ժամանակ մը տեսնուելս ետքը՝ օրին մէկը
պիտի նայիմ որ . . . է՛հ . . . առանց յոգնելու, առանց բան մը
գոց ընելու, առանց ծախսք ընելու, Տնտեսագիտութեան
նման ամենակարեւոր գիտութիւն մը սորվեր եմ։ Ամենը ա-
մենը երկու դաս առեր եմ հրամանքէդ, ու անցած օր մէ-
կուն հետ՝ սորված բաներուս վրայ երբոր սանկ կը խօսէի,
«Վայ դուն անտեսագէտ եղեր ես» բաւ գոհութեամբ։ ու-
սումնական ու բարի մարդ մըն է ըսովը։ Բայց գիտէ՞ք, որքան
ալ չար ու նախանձ ու տգէտ մարդիկ կան։ Ինչ բարկացայ
անցած օր. քանի մը հոգի մէկ եղեր՝ ձեզ կը բամբասէին կոր.
դուք Տնտեսագիտութեան վրայ գրելու չէք եղեր, դուք
սանկ ընելու էք եղեր, դուք սանկ ընելու էք եղեր։ Զէի
ուզեր ձեզի իմացնել, բայց . . .

Տ. — Ի՞նչ վնաս ունի, գիտեմ ես. եւ, եթէ կ'ուզէք,
անուանէմ ձեզ այն անձինքն՝ որք պիտի խծրծեն յաւիտեան
ամեն գրուածներս եւ ամեն գործերս։ Ես պիտի գրեմ ու
գործեմ յաւիտեան, արհամարհելով հանրային բարւոյն այն
ուխտեալ թշնամիներն։ Այլ պէտք է ըսել որ ես Տնտեսա-
գիտութեան վրայ կը գրեմ ոչ տնտեսագէտի յաւակնու-

թեամբ, այլ որովհետեւ ի վաղուց սիրած եմ այդ գիտութիւնն, որովհետեւ այդ գիտութեան վրայ գրող հեղինակաց գլխաւորներն ընթերցած եմ՝ Ատամ Սմիթէն սկսեալ մինչեւ իվ կիւյօ, որովհետեւ Եւրոպական համալսարանի մը մէջ անուանի հեղինակ-դասաստուի մը դասախոսութեանց հետեւած եմ, որովհետեւ քանի տարիներէ հետէ ալ աշխարհի տնտեսագիտական շարժման կը հետեւիմ Տնտեսագիտաց Օրագրին⁽¹⁾ միջոցաւ, առանց հաշուելու ի սկզբանէ անոի Ռըզիւ Տեսամոնիսի մէջ կարդացած տնտեսագիտական յօդուածներս :

Պ. — Զեր վրայօք ուրիշ բան մըն ալ իմացայ : Շատեր զարմացան որ ձեզի նման դասաստու մը գուրս ձգեցին կեդրունական Վարժարանէն : Երբ Վսեմաշուք կարագետ Շահպատակ եւ կարապետ Գարագաջ էֆէնտիներն ալ ինսամակալութեան զարմանք ու ցաւ յայտներ են աս մասին, անոնք ի՞նչ պատասխան տան՝ աղէկ . դուք իրեւ թէ Սագըզլեան Յովհաննէս էֆէնտիին տեղ Քաղաքական տնտեսութեան դասաստու ըլլալ կ'ուզէք եղեր կեդրոնական Վարժարանին մէջ . ուրիշ դաս չէք ընդունիր եղեր : Ասանկ սուտ ալ կ'ըլլալ^յ : Ո՞վ կը հաւատայ որ ասանկ տմարդի առաջարկութիւն մը ընէք դուք : Աս սուտը չինօղներն ալ հարկաւ անոնք են, որոնք որ առջի օրէն ձեզի «փատած գլուխ» կոչեցին . Փիլիսոփայական բառարանի եւ իմաստասիրական Շարժումի հեղինակին ի՞նչ ալ յարմար անուն :

Տ. — Իրօղութիւնն այն է որ, ազգային ուսուցչաց հրաւէր զրկուելէ յառաջ, երբ բարեկամո Մինաս Զերալ՝ ինամակալութեան անդամ՝ ինձ հարցուց թէ կեդրոնական Վարժարանին մէջ ի՞նչ ճիւղի վրայ կ'ուզէի դասախոսել, պատասխանեցի . «Ես, կամ ինէ արժանաւոր ուսուցիչներ պէտք է մտնեն ինսամակալութեան մէջ, որ, ազգային մայր վարժարանի մը համար կանոնագիր շինելու եւ այն վարժարանին վրայ հսկելու կոչուած, միակ ազգային ուսուցիչ մունի

(1) Քաղցր է ինձ յիշել եւ աստանօր Թէ Մեծաշուք Գուիտոն Խշխան Լուսինեանի մեծանձնութեան շնորհիւ կ'ընթեռնում սոյն Օրագիրն երեք ամենէ հնէտ :

իր ծոցը, երբ տասն հոգիէ կը բազկանայ ինամակալութիւնը. իսկ թէ ո՞ր ճիւղին վրայ կրնամ ամենէն աւելի ձեռնհասութեամբ եւ ամենէն աւելի եռանդեամբ ուսուցանել, այն ալ աշխահարար շարագործիւնն է: » Սոյն դասն ամենարժան ուսուցչի մը՝ Պէրպէրեան էֆէնտիի յանձնուեցաւ: Տնտեսագիտութեան դալով, ինձ անուարակոյս պատիւ կը համարէի օգնական դասատու ըլլալ Սագըզ էֆէնտիի՝ նորին վաեմութեան դասախոսութեանց ալ ունկըրելով իբրեւ ուսանող:

Պ. — Բայց ձեր հոգն է որ կեդրոնական վարժարանին դասատու չէք եղեք, երբ ձեր Հանդէսներով բոլոր ժողովրդեան դասախոս կը կանգնիք...:

Տ. — Գիտէք որ ժամավագան կ'ըլլանք կ'աղաչեմ ուրիշ ժամանակ ոչ դուք լսեցէք եւ ոչ ինձ իմացուցէք իմ վրայօքու եղած բարբանջանքներն: Հրասպարակային լուրջ դիտողութեանց միայն օպատասխան ունիմ: Հիմայ հարստութեան վրայ լսուինք:

Պ. — Այսօր հարստութեան Արտադրութեանը պիտի ըստ կինք, այնպէս չէ:

Տ. — Հարստութիւնն, այսինքն ամեն օգտակար բան որ յարմար է լնույ մարդուս բնական, իմացական ու բարոյական պիտոյին, երեք չքաններէ կ'անցնի. նաև կ'արտադրի, յետոյ կը բաշխուի եւ հուսով ուրեմն կը սպառի: Հիմայ Բնէ է արտադրելլ կամ հարստութիւն արտատելլ:

Տ. — Մանկավարժութեան համար՝ դասատուն եղած է նուազ խօսելու քան աշակերտը խօսեցնել տալու համար: Պէտք է որ խորհիք եւ դուք գտէք տնտեսագիտական ճշմարտութիւններն. որովհետեւ այդ ճշմարտութիւնք երկնքէն զամիփեղով վար իջած չեն, այլ մարդիկ՝ դիտելով ու խորհելով՝ հետպհետէ գրած են զայնս: Դասատուին արուեստը կը կայանայ՝ ճշմարտութիւնն աշակերտաց մոաց մէջ ծնուցանելուն վրայ. Մեծն Սոկրատ այս եղանակաւ կ'ուսուցանէր, եւ այս պատճառաւ մասց ծնուցիչ անուանուեցաւ: Հիմայ երբ անդրադառնաք այն բաներուն վրայ զորս ուսաք արդէն

կարող էք տալ հարցման պատասխանն . Ի՞նչ է արտադրելն , հարստութիւն արտադրելն :

Պ . — Բանի որ ամեն օգտակար բան հարստութիւն կը կոչուի՝ ինչ մեծութեամբ եւ ինչ քանակութեամբ ալ ըլլայ , ըսել է թէ հարստութիւն արտադրելն ալ օգտակար բաներ ստեղծել է , օգտակար բաներն աշխարհիս վրայ շատցնել է աշխատութեամբ :

Տ . — Մաքերնիդ ուղիղ է , սակայն բացատրութիւննիդ ուղիղ կամ ճիշդ չէ : Արտադրելն համանիշը անեղծելի : Զեզ կը յիշեցնեմ գիտական մեծ առած մը՝ որ ստէպ կը յեղյելուի . Ոչինչ ստեղծանի , ոչինչ եղծանի . աւելի պարզ բացատրութեամբ , բան մը յառաջ չը գար ոչնչէ ու բան մ'ալ ոչինչ չըլլար : Մարդս երբ աշխարհ կու գայ , իւր շուրջ ամեն բան կը գտնէ . իր պիտոյքն յագեցնելու յարմարութիւն ունեցող ամեն բան կը գտնէ մարդս իւր շուրջ : Սակայն այն բաներն ամենքն ալ անմիջական կերպիւ չեն կրնար յագեցնել իր պիտոյքն :

Պ . — Արդէն մարդս ալ ամեն պիտոյք մէկտեղ չը զգար , անանկ չէ :

Տ . — Այո՛ , պիտոյքներն հետզհետէ կը ծնանին , եւ ժամանակէ ժամանակ , աեղէ տեղ , անձէ անձ կը տարբերին . Պիտոյքն հապես յառաջատական եւ անսահման են (Les besoins sont essentiellement progressifs et indéfinis) : Մարդս աշխարհի վրայ իր շուրջ գտած բաներն իր պիտոյից յարմար ընելու համար՝ պէտք է որ աշխատի , ինչպէս ըսիք . պէտք է որ գործէ , պէտք է որ տեղափոխէ , ձեւափոխէ նախական նիւրերն (matières premières) :

Պ . — Ի՞նչ իմանալու է աղ բառով :

Տ . — Հա՞րկ է բացատրել նախանիթ բառն : Նիւթն երկու վիճակ ունի , կամ թէ ըսենք՝ երկու տեսակ նիւթեր կան անտեսագէտին համար . անզործ նիւր ու զործուած նիւր : Դուք ըսէք , ո՞րն է նիւթին առաջին վիճակն , եւ կամ ո՞րն է նախական նիւթն՝ ի մի բառ նախանիւրն :

Պ . — Երբ նիւթ մը գործուած չէ դեռ , այդ նիւթը նախանիթ է . գիտցա՞յ :

Տ. — Ճիշտ : Հիմայ որ գիտէք թէ բան մը չը ստեղծուիր, թէ մեր պիտոյքն յագեցնելու յարմար եղօղ ամեն բան կայ բնութեան ծոցն՝ նախնական վիճակի մէջ, ըսէք՝ տեսնեմ ինչ է արտադրելը :

Պ. — Արտադրելը՝ ստեղծել չէ, կը նայիմ որ իրաւ ալ անանկ է : Սա գրասեղանը ստեղծուած է՝ չեմ կը ռ նար ըսել, անոր մետաղը գետնին տակը կար արդէն : Ուրեմն արտադրելը՝ բան մը փոխել, նախնական նիւթը ձեւի բերել ու գործածել է :

Տ. — Կեցիք, միատեղ գտնենք Արտադրութեան բուն սահմանն . արդէն քանի մը բաներ ալ կան, որոնց վրայ ձեզի խօսած ըլլալու էի՝ Արտադրութեան գիտական սահմանը ձենէ պահանջելու յառաջ: Բան մը օգտակարութիւնն կ'ունենայ այն վայրկեանէն, ուր պէտքի մը լրման յարմար կը դատուի, եւ երբ այդ բանը սեփականելի չէ՝ օդին նման, երբ այդ բանն աշխատութեամբ ձեռք բերած ենք եւ իրեւ անոր տէրը կրնանք այդ բանն ուրիշի մը տալ եւ օգտակարութիւն ունեցող ուրիշ բան մը առնել անոր տեղ, այդ բանն՝ օգտակարութիւնն ենք առաջ: Կրնաս գտնել ո՞րն է այդ հանգամանքը: Աւելի պարզեմ: Ես օգտակարութիւնն մ'ունիմ, գրիւ մը ցորեն: գուն ալ համաշախ օգտակարութիւն մ'ունիս, քարչ մը կարագ: այս իրերն իրարու հետ փոխանակուելու կարօղութիւն ունին: այս իրերն իրար կ'արժեն: ո՞րն է ուրեմն իրենց նոր տնտեսական հանգամանք մ'ալ կը սասանայ: Կրնաս գտնել ո՞րն է այդ հանգամանքը: Աւելի պարզեմ: Ես օգտակարութիւնն մ'ունիմ, գրիւ մը ցորեն: գուն ալ համաշախ օգտակարութիւն մ'ունիս, քարչ մը կարագ: այս իրերն իրարու հետ փոխանակուելու կարօղութիւն ունին: այս իրերն իրար կ'արժեն: ո՞րն է ուրեմն իրենց նոր տնտեսական հանգամանքը: կը մտածես. արժեիքն՝ արժեքն՝ որ ունի երկու հանգամանքը: կամ յատկութիւն, օգտակարութիւնն ու փոխանակելիութիւն, այսինքն պէտքի մը ծառայելու յատկութիւն, եւ փոխանակելի լինելու յատկութիւն:

Պ. — Կ'աղաջեմ, գլուխս քիչ մը հաստ է, աղէկ մը հասկնամ ադ բաները: Մեր պէտքերը յագեցնելու յարմար եղօղ բանը Օգտակարութիւն մըն է:

Տ. — Այս, իրերը մեր պիտոյից յագեցման յարմար ընօղ որակութեանց բոլորակութիւնն օգտակարութիւն (utilité) կը կոչուի:

Պ. — Զեր առջի խօսքերէն անանկ իմացայ որ օգտա-

կարութիւնն երկուք է . մէյ մը պատրաստ ու շատ եղած բաներուն օգտակարութիւնը , մէյ մըն ալ աշխատութեամբ ձեռք բերուած ու ծախուիլ կրցող բաներուն օգտակարութիւնը :

Տ . — Այս , Օգտակարութիւնը իրև քնական է կամ մարդոց ձեռօֆ արտադրեալ : Օգտակարութիւնը իրնայ ձրի լինիլ , երե միմիայն քնութեան տրուած է , երե օգտակարութիւն ունեցող յիերը սեփականելի չեն , կամ երե սեփականելի լինելով՝ ամենուն տրամադրութեան ներքեւ են . որովհետեւ առանց աշխատութեան իր տրամադրութեան ներքեւ եղած բան մը ձեռք բերելու համար ամենայինք զոհորութիւն մ'անգամ ոչ ո՛վ կը հաճի ընել . Այս կարգեն է օյը , զոր ամեն մարդ ուզածին չափ կը շնչէ : Օգտակարութիւնը ձրի չե , երե մարդկային ջանիս եւ աշխատութեամբ արտադրեալ լինելով , սեփականելի եւ սահմանաւոր բանակութեամբ բաներու մեջ զնուի : Այս պարագային մեջ արտադրոյին սեփականութիւնն է , նորս առանձնաշնորհութիւնն է՝ զոր ուրիշ մարդոց հետ տուրեւառութեան նիւթ իրնայ ընել : Երբ իրաց օգտակարութիւնը ձրի չե եւ իրնայ սեփականելի լինիլ , ուրիշ սեփական հանգամանի մ'այլ կը ստանայ , որով այն իրեւ ունեցողը իրնայ անոր ուրիշ համեմատաչափ օգտակարութիւն մը ձեռք բերել : Այս սեփական հանգամանին , իրաց այս կարօղութիւնն , Արժեք (valeur) կը կոչուի :

Պ . — Ուրեմն , մարդո՞ւ ապրելու համար , այսինքն իր պէտքերը յագեցնելու համար միշտ օգտակարութիւններ առաջ բերելու եաեւէ պիտի ըլլայ , միշտ հարստութիւնն ձեռք բերելու ջանալու է . եւ ասիկայ ըլլալու է արտադրելու :

Տ . — Մօակցար գիտութեան սահմանին . Աւասիկ այդ սահմանն . Հարստութիւնն այսինին մարդոց պիտոյին յազեցնող իրաց քովանդակութիւնն արտադրելն Օգտակարութիւնն եւ Արժեքի հասել է : Բայց որովհետեւ նիւթական իրերը միայն չունին օգտակարութիւն եւ արժէք , որովհետեւ աշխատութիւնն ու ծառայութիւնն ալ օգտակարութիւն եւ արժէք ունին , ուրեմն Արտադրութեան սահմանը կատարեալ ըլլալու համար պէտք է որ ըսենք . Հարստութիւնն այսինին մարդոց

պիտոյն յագեցնող իրաց բովանդակութիւնն արտադրելին (produire) Օգտակարութիւնն եւ Արժեկ հաստել է՝ Արդեանց (produits), Աշխատութեան (travail) կամ Ծառայութեանց (services) ձեւով։ Այս անուննեւն այլ եւ այլ նկատմամբ համանիշ են։

Պ. — Առ կերպով՝ ամեն մարդ աւ կ'արտադրէ ըսել է։

Տ. — Այո՛, ամեն մարդ արտադրող (producteur) է, բաց ի տղայոցմէ, որոնք միայն սպառող (consommateur) են. բայց տղայք ալ բան սորվելով՝ ապագային մէջ արտադրելու կարօղութիւն կը ստանան։

Պ. — Աղէկ մը հասկնամ. հողագործը՝ որ հողը կը հերկէ ու ցորեն կը ցանէ, արտադրօղ.։

Տ. — Ինչո՞ւ կը վարանիս, բարձրաձայն արտասանէ հաստատութեամբ «է» բայն. Արդիւնից, աշխատութիւնն ու ծառայութիւնն համանիշ են՝ չըսինք. ցորենն հասնի կամ չը հասնի. միթէ հողագործն՝ հերկելով հողն՝ անոր օգտակարութիւնը։

Պ. — Աղէկ. դասատու մը՝ որ տղուս դաս կուտայ՝ ինչ-պէս կրնայ արտադրող ըստուիլ։

Տ. — Բայց դասատուն օգտակարութիւն կու տայ տղուդ կամ կ'աւելցնէ տղուդ օգտակարութիւնն իր դասերով։

Պ. — Բոել է մարդն ու հողը նոյն են տնտեսագէտին համար։

Տ. — Ինչո՞ւ կը գայթակղիս։ Գիտութիւնն՝ իրօղութիւնը կը նկատէ. արդ, իրօղութիւնն այն է թէ հողին օգտակարութիւնը կ'աւելնայ նիւթեական մշակութեամբ, որպէս տըղուն կամ մարդուն օգտակարութիւնը կ'աւելնայ բարոյական մշակութեամբ։

Պ. — Մարդուն. . . քարը ինձի է։ Բայց ես գետնէն երկինք չնորհակալ եմ. ձեր դասերովմը իմ օգտակարութիւնս պիտի աւելնայ եղեր՝ տղուս օգտակարութեան հետ. կը հաւատամ, կը զգամ կոր արդէն, եւ ուրախութիւնս չափ չունի։

Տ. — Ասի ուղղակի արտադրութիւնն է։

Պ. — Կեցէք ես ըսեմ. ուղղակի արտադրութիւնն այն է. . .

Տ. — Զըս պիտի կրնաք իրար բերել. մոիկ ըրէք. Ուղղակի արտադրութիւնը կը կատարուի՝ օգտակարութիւն չունեցող իրաց կամ մարդոց օգտակարութիւն տալով։

Պ. — Կամ աւելցնելով.

Տ. — Կամ անոնց արդին ունեցած օգտակարությունն աւելցնելով:

Պ. — Եւ այսօրուան համար՝ ամէն։ Տուր ձեռքդ համբուրեմ, սիրելի՛ դասատուս։

Տ. — Բայց կեցէք. անուղակի արտադրությունը (production indirecte) ո՞րն է։ Մարդս ուղղակի կերպով կարտադրէ,

Պ. — Երբ օգտակարութիւն չունեցօք իրաց կամ մարդոց օգտակարութիւն կու տայ, կամ անոնց արդէն ունեցած օգտակարութիւնը կաւելցնէ.

Տ. — Խիստ լաւ։ Խոկ անուղակի կերպով կարտադրէ։

Պ. — Երբ . . . ատիկայ չլցաեմ.

Տ. — Դիտնալու էիք։ Դուք ձեր պիտոյքը լեցնելու համար բանի մ'օգտակարութիւն կու տաք, օրինակի համար անտառէն փայտ կը կարէք եւ հիւղակ մը կամ նաւակ մը կը շինէք։ Սակայն եթէ դուք կարող ըըլլաք ձեր պատին համար պէտք եղած քարն ուղղակի հայթոյթել կամ արտադրել, ի՞նչ կ'ընէք այս ատեն։

Պ. — Ունեցօղէն կ'առնեմ,

Տ. — Զրի՞ կ'առնէք։

Պ. — Զրի ինչպէս առնեմ. օդ չէ, լոյս չէ որ ձրիասկ վայելեմ. ստակով պիտի առնեմ։

Տ. — Եթէ ստակ չունենաք. եթէ դրամն հնարուած չըլլար իբրեւ միջնորդ վաճառք, ի՞նչ պիտ' ընէիք։

Պ. — Փայտ կու տայի եւ քար կառնէի։

Տ. — Ահա ինչ որ անուղղակի արտադրութիւն կը կոչուի. մարդս անուղղակի կ'արտադրէ փոխանակութեամբ, (la production indirecte s'opère par l'échange), որ հին ժամանակները տեղի կ'ունենար ինչքի տեղինչք (զոր օրինակ քարի տեղ փայտ) տալով. եւ փոխանակութեան այս նախնական ձեւն ընցափոխություն (τρος) կը կոչուի. Խոկ ետքերը փոխանակութիւնը կատարուեցաւ արդիւնքի կամ ծառայութեան փոխարէն դրամ տալով։ Աւելորդ է ըսել որ փոխանակութիւնն երկու գործողութիւն կը պարունակէ վաճառում (vente) եւ գնում (achat)։ Հիմայ կրնաք երթալ։ Ե.

ՏՆՏԵՍՆ ԵՒ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆԸ

Տարակոյս չունիմ թէ Տնտեսը կարդացողներէն, — եւ հաճութեամբ կը լսեմ թէ արդէն բազմաթիւ են անոնք, — շատերն եւ թերեւս աւելի հանձարեղներէն իսկ ոմանք, բարեկամիս՝ եղիա էֆէնտիին՝ սիրուն եւ գեղեցկահիւս ոտանաւորները տեսնելով, քթերնուն տակէն խնացած, եւ ըսած են թէ « ի՞նչ բան ունի Տնտեսին մէջ բանաստեղծութիւնը : » Նոր ապացոյց մը՝ որ Տէմիրճիպաշեանը եւ բոլոր իրեն նմանողները՝ գործոյ մարդիկ չեն, գործնական, բռադի՛ չեն, մէկ խօսքով, երազողներ են, եւ պիտի մնան միշտ, այնպէս չէ: Եւ սակայն ասկէ աւելի վեր ի վերոյ գատաստան չկրնար ըլլար: Ինչո՞ւ համար բանաստեղծութիւնը Տնտեսին մէջ պիտի չը մանայ: Արդեօք անո՞ր համար որ Տնտեսն աշխատութիւն եւ խնայութիւն կը քարոզէ: Բայց ո՞լ ըստ թէ բանաստեղծութիւնը ծուլութիւն եւ շռայլութիւն է: Միթէ Տնտեսին գոները գոցելու է Մուսայից՝ անո՞ր համար որ բանաստեղծութիւնը օգտակար բան մը չէ, եւ կամ թէ շատ բարձր բան մըն է ժողովրդեան համար: Այս երկու կարծիքներն ալ ճիշդ եւ ընդունելի չեն: Օգնել գործաւորին միայն ստակ վաստեկելու, գրալանը լեցնելու, տնակ մը ունենալու համար, բաւական չէ: Պէտք է ջանալ անոր միտքն ալ մշակել, զարդարել, հոգին ալ ազնիւցընել: Անոր համար գրական գործոց, վէպերուն, բանաստեղծութեան ընթերցումը շատ օգտակատ է աշխատաւորաց: Եթէ ուղղակի հարցում մը, հարցապեղում մը ըլլար Մեծապատիւ Արշակ էֆէնտիին, անմիջապէս պատասխանը կուտար. Ամէն բանի պատասխան մը ունի ժողովրդասէր եւ համբերատար բարեկամս: Երբեք չանձրիկիր, չը շռարիր: Բայց այս մասին շատ մը օրինակներ ալ կրնայ յառաջ բերել, արդարացնելու համար այն սիրալիք հիւրընկալութիւնը՝ զոր կընէ բանաստեղծութեան իւր տնարար Տնտեսին մէջ: Եւ ի՞նչ օրինակներ: Ամէնէն աւելի գործնական, բռադի՛, ազ-

գերուն, Անգղիացոց, Ամերիկացոց, Գերմանացոց նմանակերպ թերթերը։ Ասոր ըսելիք մը չունին, կարծեմ, մեր բուադի գլուխներն։ Ուզողը կրնայ Տնտեսական Միութեան սենեակն երթալ։ Արշակ էֆէնտին՝ գրասեղանին վրայ ունի այնպիսի թերթ մը, Գերմաներէն, որուն մէջ այն շատ մը պիտանի տնական, եւն, հարցումներուն քով՝ զորս Տնտեսին մէջ ալ կը կարդամք, գեղեցիկ գեղեցիկ քնարերգական բանաստեղծութիւններ ալ կը հրատարակուին բոլոր գերմանական իտևաշական յափշտակութեամբ գրուած։ Արշակ էֆէնտին ուրիշ օրինակ մըն ալ կրնայ ի մէջ բերել, եթէ իւր գերմանական թերթը բաւական չըլլայ համոզելու համար Տնտեսին՝ Մուսայից երես տալրուն վրայ գայթակղողները։ Կրնայ Ֆրանքլինը վկայ կանչել, որուն աշխարհիս բոլոր գործնական իմաստութիւնը պարունակող գրքերը բանաստեղծութիւններով ճոխացած են։ Ֆրանքլին օրացոյցներ ալ կը շինէր, որոնց մէջ բանաստեղծութիւններ կը գրէր։ Իրաւէ որ, Լապուլէին (*) ըստածին պէս, բանաստեղծութիւնը շատ բաձր չէ։ բայց ի՞նչ փոյթ։ լսնդիրն այն չէ։ Լապուլէն անուանեցի, եւ ոչ առանց յուզման, եւ խորին յուզման։ Ճանչցայ այն մեծ միտքը, այն մեծ սիրտը, այն ժողովրդական գրատանց, — Ֆուանքլին առաջինն եղած է հաստատելու համար սոյն գրատունները, — ջերմ պաշտպանը։ (Հոս փակագիծ մը կը բանամ, հարցնելու համար Արշակ էֆէնտին թէ ի՞նչպէս ինքը՝ որ գործաւորաց ամէն պիտոյքն, գործակցութեան ամէն միջոցները մտածած է, Տնտեսական Միութեան նպատակը՝ անոր կանոնադրութեանը մէջ նշանակած ատենը, ժողովրդական մատենադարանները մուցեր է, ինքն՝ հիմնադիրն Ազգային Մատենադարանին՝ որ գերազգաբար մեծահամբաւ կամացով մը խառնումառն եղաւ ի վկաս նախնական բազմաշահ գաղափարին)։

Լապուլէին յիշաստակութիւնը ըրի։ Տեսէք ի՞նչ կըսէ։ Անգղիոյ օրինակը աչքերնուս առջեւն է սովորեցնելու համար մեզի թէ ի՞նչ անհուն բարիք կընեն ժողովրդական մասնաւոր գրատունները։ Գործաւորը հոն իւր հոգին կը

(*) Երեւելի քաղաքագէտ մատենագիր, եւ օրէնսգէտ զաղղիացի.

մշակե կարդալով գրական հրաշակերտները՝ Գործաւորին՝ կինը, իրիկունը, տքնած ատենը, էրիկը տունը կը պահէ, իւր մանկանց որորոցին քով։ Ընտանիքը ասով կը վաստըկի զամենայն զոր կը կորսընցընէ գինետունը։ Ծնկերութիւնը կը վաստըկի զամենայն զոր կը վաստըկի ընտանիքը։ Կարելի չէ ամէն գրպաններուն մէջ ոսկի գնել, բայց կրնամք ամեն հոգիները հարստացընել։» Գործաւորը հոն իւր հոգին կը մշակէ, կըսէ, Լապուլէն, կարդալով գրական հրաշակերտները, այսինքն Իլիականը, Փետոնը, Գրահիս կորուսեալը Աստուածային կատակերգութիւնը, Օրինաց ողին, Համելիրը, Յաղագս Պատկին ճառը, Պոմիւէի Դամբանականները, Բասքալին Դաւառական նամականին, Ֆառուրը, Մանֆրէսը, Ռասինին Գորողիան, Վոլթէուին ձաշակ գրարուցը, Տէքառթին Յաղագս ոնց ճառը, Քանթին Քննուրին զուս բանին (Critique de la raison pure) ը, եւն, եւն։ — Սնցեալները Արշակ էֆէնտիին սենեակը մեր նորեկ քաջուտումն վաստաբաններէն Շնորհքեան երուանդ էֆէնտիին հանդիպեցայ. Ճեռքը գիւրատար եւ գիւրագին գրքոյկ մը ունէր, «Ժողովրդական Մատենադարան գրականուրեան հրաշակերտներուն», անուն նոր Գաղղիական հրատարակութենէ մը։ Տանթէն, Եսթիլէսը, Վոլթէուը, Շէքսփիուը, Ռուսուն, Եւն, Եւն, հետզհետէ ի լցոս պիտի ելլեն՝ ժողովրդեան յատկացեալ այս մատենադարանը կազմելու համար։ Խոստովանինք ուրեմն թէ գրականութիւնը, եւ յականէ յանուանէ բանաստեղծութիւնը օգտակար է ժողովրդեան, եւ թէ սխալէ կարծելը թէ անոր համար շատ բարձր բաներ են անոնք։ «Մէնչըսդըրի գործաւորք» կըսէ, Լէոն Ֆոլէ^(*), «շատ մեծ ախորժակ ունին այնպիսի ուսմանց որ կարծես թէ իրարու հակառակ են, այսինքն մաթէմատիկայի եւ բանաստեղծութեան»։ Դարձեալ Լէոն Ֆոլէ կը գրէ թէ «յԱնդղիս, շատ անգամ, Mechanic Instituteները՝ քսան սթէրլին ոսկի առած են, իրիկուն մը, Շէքսփիուի թատերախաղներէն մէկուն ընթերցումը, աղէկ կարդացողէ մը, լսելու համար»։ «Զկայ գրեթէ բնաւ ուահահորդ գաղթականի (ριονπιερ) հիւղ մը,» կըսէ, Յաղագս Ռամիկապետու-

(*) Անուանի սնտեսաբան, ելեւմտագէտ եւ այր պետական գաղղիացի.

թեան յԱմերիկա տնուն սքանչելի գրքին հռչակաւոր հեղինակը, «ուր Շեքսփիորին քանի մը հատորները մարդ չըդանէ. «միտքս կուգայ», կը յաւելու թոքվիլ, (*) «որ առաջին անգամ այնպիսի խրճիթի մը մէջ կարդացի ես Հենրիկոս հինգերորդին տուամը»: Այս, անգութեն անոնք՝ որ կուզեն զրկել վաստակաբեկ եւ տառապագին աշխատաւորը գրականութեան պարգեւած վայելմունքներէն եւ միմիթարութիւններէն: Չեն գիտեր ի՞նչ կըսեն անոնք՝ որ կը կարծեն թէ ժողովուրդը գեղեցիկ գպրութիւններէն բան մը չը հասկնար: Ընդհակառակն: Լսենք թէ ի՞նչ կըսէ Լամարդին, եւ իւր խօսքերն ի մէջ պիտի բերեմ թարգմանուած վեհագոյն վարժապետէս, հոգելրյս Գարրիէլ Այվազովսքիէն՝ իրաւցնէ Ոսկերեանի ոսկեգրիչ թարգմանչաց արժանաւոր լեզուով մը: «Եւ ամբոխն անգամ որ առանց գպրութեան իցէ (illetiré), յորժամ ի մի վայր եկեալ խոնիցի եւ քան զովորականն իւրչափ ի վեր ասիստնայցէ, հանգոյն իմն մրրկածուին Ովկիանու յամբառնալ գիտանել ալեացն կուտակելց, յանկարծակի յեղակարծում պահու զգրաւորականին յանձին զգայ զովորժակ: կամի զի որ խօսին ընդ նմա, ոչ եւս զկապելաց եւ զիողոցաց կալցին զտարագ խօսից, այլ զայն զոր արք աւուրց հանդիսականաց գանձեալ պահցեն ի շրթունս իւրեանց՝ բարբառ զուտ եւ յստակ քան զամենայն, լի նմանութեամբք եւ պերճ ասացուածովք...: Դպրութիւն ամբոխին ձոխաբանութիւն. ձոխ լեր ի խօսս, եւ ասասջիր զոր ի՞նչ եւ կտմիս»: La grandeur, voilà la littérature du peuple; soyez grand, et dites ce que vous voudrez; (ձոխը մեծի իմաստով գործածում է Այվազովսքին): Ի՞նչ որ գրականութեան համար զրուցեցի, նոյնը կրնամ ըսել գեղարուեստից համար: Ժողովուրդը կը յուզուի կըզմայլի, կը յափշտակուի զչայտն կամ զՊէթովն լսելով, ի՞նչպէս հիացած սքանչացած կը կենայ Միլոյի Աստղկան կամ Ռաֆաելի մէկ պատկերին առջեւ:

Դիտողութիւն մը ունիմ աւելցընելու: Ժողովրդական անտեսագիտութիւն, ժողովրդական մատենագարաններ, ևն. եւն, կըսեմք: Զգուշանամք այս «ժողովրդական» բառն ան-

(*) Համբաւաւոր մատենագիր բաղաքագէս եւ այր պետական գաղղիացի

գամ ստէպ ստէպ կրկնելէն մեր խօսակցութեանց, մեր գրութեանց մէջ։ Շատ դիւրազգած է ժողովուրդը։ Ճշմարիտ մարդասիրի մը՝ պարտքն է ջանալ որչափ հնար է պարտկել, անզգալի ընել այն տարբերութիւնները՝ որ ընկերութեան բարձր եւ ստորին դասերուն մէջ կան։ Զեմ դիտեր ուր խորհրդածութիւն մը կարդացի որ շատ խորունկ տպաւորութիւն մը ըրաւ վրաս։ Գերեզմաննոցներուն մէջ հասարակաց թաղ մը կայ։ Գաղղիացիք աւելի դառն բացատրութիւն մը ունին անոր համար։ Հասարակաց փոս կըսեն (Fosse commune)։ Աղքատներն, անտուններն եւ անտէրներն հոն կը թաղուին խառն ի խուռն եւ շատ անգամ իրարու վրայ դիզուած։ Տարակոյս չկայ թէ երբ աներջանիկ աշխատաւորը կը տեսնէ իւր քաղցր սիրուհին եւ կամ իւր հրեշտակ մանկիկն իջեալ ի փոսն այն տղմալից եւ ոտնհար՝ որ բերանաբաց կը սպասէ իւր սրտին հատորը կլելու համար, մարմարեայ հոյակապ եւ շքեղ շիրիմներուն եւ մահարձաններուն քով, տարակոյս չկայ, կըսեմ, թէ այն աշխատաւորը գերեզմանատունէն դուրս ելած ատենը սրտին մէջ լեզոյ խմոր մը կառնու կը տանի որ մտքին մէջ աղէկ մտածութիւններ չը հասցըներ։ Ընդհանուր աշխարհքն անհանգիստ է։ Այդ սրտաթունդ անհանդստութեան մէջ ընկերական խնդիր մը, աշխատաւորի խնդիր մը կայ՝ որ աւելի թերեւս վտանգաւոր է քան թէ մեծ Տէրութեանց նախանձայուզութիւնները, քան թէ Գերմանիոյ պատերազմական պատրաստութիւնները։ Զիմնդրենք ուրեմն զրկել ժողովուրդը՝ մտքի եւ սրտի ոյժ և միմիթարութիւն տուող ընթերցմաննքներէն, եւ մի խծբծինք Տնտեսն իւր Մուսայասէր տեղի անցուն (Tendance, միտում, բերում) համար։ Տնտեսին դռները գոցել Տէմիրճի-պաշեանին Լճակիս՝ նոյնչափ անտեղի կըլլար՝ որչափ անտեղի եղաւ աղնիւ բարեկամիս՝ կեդրոնական վարարանին դռները գոցել։

Ի Ն Զ Ո ՞Ի Կ Ը Մ Խ Ե Ս

«Ինչո՞ւ կը ծխես , հայրին» հարցուց օր մը փոքրիկ տղաս :
ինչո՞ւ կը ծխեմ . ստիպուեցայ յայնժամ ես ալ մտածել :

կը ծխեմ , քանզի վարժուած եմ եւ չեմ կարող ըլլալ
առանց ծխելու . կը ծխեմ , քանզի սիկառը գէշ բարեկամէ
մը աղէկ է , մանաւանդ ճամբորդութեանց ժամանակ զօրս
ստիպուած ենք ամեն օր կատարել . կը ծխեմ , քանզի ծխա-
լսուն ինձ ընկեր մ'է անքուն զիշերներու , ամոքիչ՝ հոգ-
նութեանց եւ մատանջութեանց , ինչպէս եւ խորհրդատու
մտաւորական զբաղմանց ժամանակ . վերջապէս կը ծխեմ ,
քանզի անմեղ զրօսանք մ'է ծխելն , որոյ գործածութիւ-
նըն ընդհանրացած է ամեն լուսաւորեալ ազգաց մէջ . մինչեւ
անգամ երգեր եւ բանաստեղծութիւններ յօրինուած են
անոր ի գովեստ : Վասնորոյ , ինչպէս որ անդդիական երգը
կը պատուիրէ Then smoke my boy and let each puff take
grief and care away, պէտք է որ ծխենք՝ մեր ամեն հոգերն
ու ցաւերը սիկառի մուխերուն նման վանելու համար :

իրաւ է որ այս պատասխանները կուտանք չի ծխողներուն
ինքզինքնիս արդարացնելու համար . բայց միթէ տղաս՝ որու
անտարակոյս արատուոց բան մը երեւցած էր ծխելն՝ գոհ պիտի
մնար սյնափիսի սլատասխաններէ , մանաւանդ թէ իմ խիղճս
գոհ պիտի ըլլան երբ իմ զաւակս ալ յորդորուէր ծխե-
լու : Անտարակոյս ոչ . եւ ես կը հաւատամ թէ խոհուն
հայր մը՝ ինքն որչափ ալ ծխելու մոլի ըլլայ՝ յանձն չի պիտի
առնէ իր զաւակն համոզել որ ծխելու վարժուի , երբ մանա-
ւանդ ինձ նման բազմամեայ փորձառութեամբ գիտնայ ծը-
խելու գէշ հետեւսնքները . գիտնայ թէ , ծխախտը թոյն
մ'է սարսափելի տեսակէն , թոյն , որ՝ անզգալսապէս բայց հաս-
տատապէս մարդուս մարմինը տկարացնելով՝ կեանքը կը կար-
ճեցնէ : Յայտնի է թէ ծխախտին ազգեցութիւնը միօրինակ
չէ ամեն անձանց վրայ . ոմանց կուրծքին , ոմանց կոկորդին ,
ոմանց ստամոքսին , ոմանց ջիղերուն կը վնասէ , եւ անտարա-

կոյս մարմնոյն տկար մասանց վրայ աւելի մեծ կը լլայ իր ներգործութիւնը. իմ անձնական օրինակս մէջ բերելով՝ ջղային եւ կոկորդի տկարութիւն պատճառաւած էր ինձ. միշտ կը հազայի, վոքրիկ ցուրտ մը անմիջապէս ինձ կազդէր. եթէ գիշեր մը տունէն դուրս ելլէի՝ ամեն նախազգուշութիւն ընելով հանդերձ՝ հետեւեալ օրն ակռայի, աչքի, քթի, կոկորդի կամ այլ ցաւ մը անպատճառ կ'ունենայի: Գիտէի թէ այս ամենքը ծխախոտի հետեւանքն է. բայց այնպէս կը կարծէի թէ կարող չը պիտի ըլլայի զայն ձգել, քանզի գերի եղած էլ թըշուառական խոտի մը՝ որու ամեն օր զոհ կը մատուցանէի իմ կեանքէս եւ իմ քսակէս. ամեն օր կսպառէի 20/25 տրամ ծխախոտ, որ տարին գրեթէ նոյնչափ հոխա կ'ընէ. ասկից դաստ սիկառի թուզթ, սիկառի տուփ, սիկառն ինկած եւ հագուստ կամ սենեակին բաղնոյն այրած է. եթէ երբէք միսիթարական բան մը կայ, այն է թէ, ինչպէս շատերու պատահած է, իմ սիկառս ալ տեղ մը լինալով հրդեհ պատահած չէ: Այս մոտածմունքներն՝ ինչպէս ամեն ոք կրնայ երեւակայել ամօթահար ըրին զիս. քանզի նախ առողջութեանս կոռուստն իմ գործելու կարողութիւնս կը նուազցնէր. երկրորդ մոտածեցի որ ծխախոտի պատճառաւ իմ վատնած գրամմերս եթէ ի ձեռին ունենայի, գեղեցիկ տան մը տէր կրնայի ըլլալ, կամ եթէ այն գրամմերը փոխանակ տերեւի մը տալով այրելու՝ ապահովագրական ընկերութեան մը յանձնած ըլլայի, իմ ընտանեացս ապագան ապահովուած կը լլար. ուստի չի կարենալով բնաւ զիս արդարացնելու կետ մը գտնել, ստիպուեցայ ճշմարիտը խոսանակիլ իմ որդւոյս. եւ միթէ պէտք չ'որ միշտ ճշմարիտը ուսուցանենք մեր զաւակաց. ուստի հետեւեալ կերպով պատասխանեցի:

Զաւակս, ծխելը գէշ եւ վեասակար սովորութիւն մ'է, որ իմ երիտասարդութեանս ժամանակ ընդհանուր էր եւ պէտք մը կը կարծուէր ամեն ընկերութեանց մէջ: Ես մինչեւ քսան տարեկան հասակս չէի ծխեր. իմ ընկերներս զիս կը ծաղրէին չի ծխելուս համար. կանուխէն ծնողքս կոր-

սընցուցած ըլլալով եւ խորհրդատու ճշմարիտ բարեկամ մ'ալ չունենալով, աեղի տուի անմիտ ընկերներուս եւ վարժուեցայ ծխելու . տարիներ անցնելէ եաքը միայն՝ անոր վասաներն իմացայ, եւ հասկցայ որ՝ եթէ երբէք ուրիշը ծաղրել ներելի ըլլար, ոչ թէ չի ծխողն՝ այլ ծխողը պէտք էր ծաղրել: Բայց ի՞նչ օգուտ որ ժամանակն անցած էր, ծխելու վարժուող մէկը չի կրնար յետոյ զայն ձգել. ինչպէս այսօր ես ծխախոտի վասաները լսւ գիտնալով եւ ի սրաէ թողուլ փափաքելով հանդերձ, չեմ կարող անկից բաժնուիլ. ուստի, կը խրատեմ քեզ, զաւակս, որ չի վարժուիս այս մոլութեան՝ որպէսզի դուն ալ յետոյ պատճառ չունենաս զզջալու ինձ նման:

Մանկան հարցումները շատ անգամ կարեւոր խորհըրդածութեանց դուռ կը բանան. վերոյիշեալ խրատը զաւկիս տուած ատեն՝ ես ալ խրատ մը առած եղայ. մինչեւ այն օր ծխախոտն ինձ համար անհրաժեշտ պէտք մը կերեւար՝ հացի եւ ջուրի հաւասար. նոյն օրէն անդին սկսայ մտածել թէ արդեօք կարելի չչ ապրիլ առանց ծխելու ։ Երջանիկ եմ այսօր կարենալ յայտարարելով թէ, 25 տարի շարունակ եւ մոլեգին ծխելէ յետոյ, ՈՒԹԸ ՏԱՐԻ է ՈՐ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԶԳԱԾ ԵՄ, եւ առողջութիւնս վերստացած։ Թէ այնչափ մոլի ըլլալէ յետոյ ի՞նչ կերպով կարողացայ ձգել ծխախոտը, ուրիշ առթիւ մը կը պատմեմ. ընթերցողը թող գիտնան որ գըժուարութիւն մը չի կայ ծխաթողութեան համար, եւ իրենք ալ ձգելու քաջալերուին, թողլով որ վայրենիներն առանձին վայելեն ծխախոտը, ինչպէս որ կը վայելէին Ամերիկան գըժուելէ առաջ։

Յ. Ա.

Բ Ն Ա Կ Ա Ր Ա Ն Ի Մ Ա Ս Ի Ն

Բնակարանի ընտրութիւնը շատ կարեւոր է եւ արժանի ուշադրութեան եւ քննութեան։ Արդարեւ յայտնի է թէ առողջական կանոնաց համաձայն եւ հաճելի կերպով շնուռած

բնակարան մը առողջութեան եւ հանգստութեան գլխաւոր պայմաններէն մէկն է. բնակած տեղերնիս մեր առողջութեան վրայ մեծ ազդեցութիւն ունին եւ եթէ ըստ ամենայնի օդակար եւ հաճելի վիճակի մէջ բնակարան չկրնանք ունենալ, գոնէ պէտք է ողջապահիկ կանոնաց յարմարցնել զայն: Ուստի բնակարան մը ընտրելու համար հարկ է նախ եւ առաջ օդին մաքրութիւնը քննել, զի օդը կենաց էական պէտքերուն գլխաւորն է եւ մարդուս առողջ կամ հիւանդ լինելը ըստ մեծի մասին անիկ կախում ունի: Օդը միշտ մաքուր, չոր եւ բարեխսառն ըլլալու է հետեւաբար գիւղի բնակութիւնը աւելի ընտրելի է քան թէ քաղաքինը, վասն զի հոն օդը աւելի մաքուր եւ առողջաբար է, թէպէտեւ հոն ալ վատառողջութեան պատճառներ կրնան գտնուիլ բայց օդին առատութիւնը եւ ստէպ նորոգուիլը ընդհանրապէս կը չեղոքացնէ զայնս: Գալով քաղաքներուն՝ անոնց միջնորդը միշտ կ'ապականուի ոչ միայն մարդոց բազմութենէն այլ եւ ուրիշ շատ պատճառներէ. քաղաքաց մէջ օդը եւ լցուքիչ կը թափանցեն. վողոցներուն եղերքը գտնուող բազմայարկ տները դէմ կը գնեն հովին այսինքն օդին սահմանութելուն. ասիէց զատ քաղաքաց հողը բուսական եւ կենդանական բազմատեսակ մնացորդներով կ'ապականի, եւ խոնաւութեան ժամանակներ ցեխի փոխուելով վտանգաւոր ժամանակութիւններ յառաջ կը բերէ որով հանրային առողջութիւնը կը վնասի:

Բնակարանաց առողջաբար ըլլալու մասին գետնի հողին տեսակն ալ մեծ դեր ունի. զի այն տեղ ուր հողը կաւային կամ կրային եւ կամ գաճային է, չուրը կը կենայ եւ հողին խորերը չ'երթար, որով գետինը միշտ խոնաւ կ'ըլլայ եւ մարդոց առողջութիւնը կը վնասի: Պէտք է նաև հեռու գըտնուիլ ճահճներէ: Կարեւորութենէ զուրկ չ'են նաև տիրող հովերուն անցած տեղերը. այսպէս օրինակի համար ճահճներու կամ ապականեալ տեղերու վրային անցած հովերուն դէմ բնակարաններ չինելը առողջութեան նպաստաւոր չէ: Եթէ այս տեսակ առողջութեան աննպաստ տեղերու մէջ բնակութիւններ հաստատել հարկ լինի, արհես-

